ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 18 անդամներ:
Բացակա էին՝ Արմեն Դավթյանը, Մարտուն Մարտիրոսյանը, Արմեն Ջուլհակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Արսեն Հարությունյան, Լուսինե Հովհաննիսյան, Գագիկ Շիրմազանյան, Լևոն Քալանթարյան, Անուշ Կիրակոսյան, Սամվել Անտոնյան, Գևորգ Մանուկյան, Արթուր Սավթալյան, Գրիգոր Պապյան, Արսեն Ավագյան, Էլմիրա Ռևազյան
Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Գրիգորյանը
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Մովսիսյանը
Նիստը տեխնիկական խնդիրների պատճառով առցանց չէր հեռարձակվում:

Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 1 հարց:

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)

1. Հաստատել համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 130-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԳՐԻԳՈՐ ՊԱՊՅԱՆ)

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի տարածքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 131-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՆԱՍՅՈՒՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՎՃԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԳՐԻԳՈՐ ՊԱՊՅԱՆ)

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքում համայնքին պատկանող հենասյուները վարձակալությամբ տրամադրելու համար վարձավճար սահմանել ամսական 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 132-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

1. Ստեփանավան համայնքում հաստատել մասնակցային բյուջետավորման ընթացակարգը և 2025 թվականի բյուջեում հատկացնել 10000000 (տասը միլիոն) ՀՀ դրամ գումար 2025 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:
2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են քաղաքաշինության ոլորտը՝ որպես առաջնահերթություն:
3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը, համայնքի բնակիչները, քաղաքացիական հասարակությունը և հասարակական կազմակերպությունները:
4. Համայնքի ղեկավարին՝
   1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2025 թվականի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:
   2) քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը:
   3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 133-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

1. Հաստատել Ստեփանավանի համայնքապետարանի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության 2024 թվականի տարեկան գույքագրման արդյունքները:
2. Կցվում են գույքագրման արդյունքները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 134-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի պաշտոնական համացանցային կայքէջի վարման կարգը՝ ըստ հավելվածի /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 135-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՐՍԵՆ ԱՎԱԳՅԱՆ)

1. Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի աղբահանության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա փորձաքննության ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 136-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 25.12.2023 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 139-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

1. Սահմանել 2025 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 25.12.2023 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքում 2024 թվականի համար տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» թիվ 139-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 137-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված համայնքի 2024 թվականի բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի եկամուտներում կատարել հետևյալ փոփոխությունները.
1. Պետական բյուջեից տրվող այլ դոտացիաները պակասեցնել 4900.0 հազ.դրամով
2. «Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ» եկամտատեսակը ավելացնել 29900.0 հազ. դրամով, սահմանել 46626.047 հազ.դրամ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի ծախսերում կատարել հետևյալ փոփոխությունները.
1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2024 թվականի բյուջեի «Գրադարաններ» ծրագրի նախահաշվի (բաժին 8 խումբ 2 դաս 1) . հոդված «4637–ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը պակասեցնել 250.0 հազ. դրամով, սահմանել 14989.4 հազ. դրամ

. հոդված «4655– կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 250.0 հազ. դրամ՝ սահմանել 425.0 հազ.դրամ
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2023 թվականի բյուջեի «Նախադպրոցական կրթություն» ծրագրի նախահաշվի (բաժին 9 խումբ 1 դաս 1)
.հոդված «4637–ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին» ծախսային հոդվածը ավելացնել 25000.0 հազ. դրամով, սահմանել 192186.1 հազ. դրամ:
Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 138-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱԶՅԱՆ)

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2025 թվականի բյուջեն համաձայն 1-6 հավելվածների:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 139-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ)

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան, աճուրդով վաճառքի սահմանված կարգով օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող հետևյալ հողամասերը՝

- Ստեփանավան համայնքի 06-007-0015-0057 կադաստրային ծածկագրի Մարշալ Բաղրամյան փողոց 5 հողամաս հասցեում գտնվող 0.00492 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 492000 /չորս հարյուր իննսուներկու հազար/ ՀՀ դրամ:
- Ստեփանավան համայնքի 06-106-0023-0009 կադաստրային ծածկագրի գյուղ Ուրասար 1-ին փողոց 3 հողամաս հասցեում գտնվող 0.13561 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 1356100 /մեկ միլիոն երեք հարյուր հիսունվեց հազար հարյուր/ ՀՀ դրամ:
- Ստեփանավան համայնքի 06-106-0002-0007 կադաստրային ծածկագրի գյուղ Ուրասար 4-րդ փողոց 8 հողամաս հասցեում գտնվող 0.4371 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական

արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 4371000 /չորս միլիոն երեք հարյուր յոթանասունմեկ հազար/ ՀՀ դրամ:

- Ստեփանավան համայնքի 06-106-0002-0008 կադաստրային ծածկագրի գյուղ Ուրասար 6-րդ փողոց 16 հողամաս հասցեում գտնվող 0.20527 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, մեկնարկային գին սահմանել՝ 2052700 /երկու միլիոն հիսուներկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 140-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

1. Թույլատրել սահմանված կարգով օտարել համայնքի սեփականությունը հանդիսացող ՎԱԶ-21063 մակնիշի ավտոմեքենան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-16 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 141-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՍՄԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ)

1. Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 14.02.2025թ. ժամը 14.30 ին:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 142-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ԱՍՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՏՈՄ ԳԱԳԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ԻՍՊԻՐՅԱՆ

ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՆՈ ՀԱԿՈԲՅԱՆ

ԼԻԼԻԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՂՈՒՆԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ

ԼԵՎՈՆ ՊԱՊՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏՈՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Հասմիկ Մովսիսյանը

_____